ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ, ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԿՆՎՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

(ADDRESSEE)

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Մատակարարողի անունը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին

Այս ծանուցումը տեղեկացնում է ձեզ, որ մենք հաստատել ենք ձեր ստացողի խնդրանքը փոփոխել իր առավելագույն շաբաթական ժամերն ամսվա հատուկ շաբաթում՝ ամսական կրկնվող իրադարձության պատճառով: Դուք կարող եք աշխատել այս լրացուցիչ ժամերը յուրաքանչյուր ամսվա այդ հատուկ շաբաթվա ընթացքում: Մի աշխատեք այս ժամերն առանց ձեր ստացողի թույլտվության:

Սա նշանակում է, որ ձեր առավելագույն հաստատված ժամերը յուրաքանչյուր ամսվա մեկ շաբաթվա համար տարբերվելու են ամսվա մյուս շաբաթներից:

Դուք կարող եք շարունակել աշխատել այս շաբաթական ժամատախտակով բոլոր հաջորդ ամիսներին, եթե ձեր ստացողը շարունակում է ունենալ այս փոփոխության կարիքը՝ կրկնվող իրադարձության պատճառով: Ձեր ստացողը պետք է անմիջապես տեղեկացնի վարչաշրջանին, եթե նրա իրավիճակը փոխվում է, և նրան այլևս հարկավոր չէ այս փոփոխությունը:

Խնդրում ենք նաև հաշվի առնել, որ եթե դուք աշխատում եք մեկից ավելի ստացողների համար, դուք չեք կարող աշխատել ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում: Հետևաբար, եթե ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերի փոփոխությունը նշանակում է, որ դուք աշխատելու եք 66 ժամից ավել աշխատանքային շաբաթում, դուք չեք կարողանա աշխատել այդ լրացուցիչ ժամերը, կամ պետք է փոխեք մեկ ուրիշ ստացողի համար ձեր աշխատած ժամերը:

Եթե լրացուցիչ հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, ապա կարող եք դիմել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ վերոնշյալ հեռախոսահամարով: